ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-333-07.07.2022-ՏՀ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էներգետիկայի մասին» 2001 թվականի մարտի 7-ի ՀՕ-148 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի 25-րդ կետում «ճանաչված սպառող» բառերից հետո լրացնել «(ենթասպառող)՝ շուկայի կանոններով սահմանված առանձնահատկություններով» բառերը, իսկ 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20) հաշվեկշռող էլեկտրաէներգիա՝ էլեկտրական էներգիայի ուղիղ պայմանագրերի և օր-առաջ շուկաներում վաճառված և գնված էլեկտրական էներգիայի քանակությունների տարբերությունը իրական ժամանակում՝ միևնույն հաշվարկային ժամանակահատվածում փաստացի առաքված և ստացված (ներառյալ՝ ներկրված և արտահանված կամ տարանցիկ փոխադրված) էլեկտրական էներգիայի քանակություններից, որը որոշվում է շուկայի կանոններով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 20.1-ին կետով.

«20.1) հաշվեկշռման ծառայություն՝ հաշվեկշռող էլեկտրական էներգիայի արտադրության նպատակով շուկայի կանոններով սահմանված կարգով մատուցվող ծառայություն.»:

Հոդված 3. Օրենքի 17-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ի» կետով.

«ի) հաշվեկշռման ծառայության մատուցման իրավունք եւ պարտավորություն տալ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող այն անձին, որն Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի դրական եզրակացության հիման վրա հնարավորություն ունի էլեկտրաէներգետիկական շուկայում մատուցելու հաշվեկշռման ծառայություն:»:

Հոդված 4. Օրենքի 35-րդ հոդվածում՝

1) 1-ին մասում «այդ» բառից հետո լրացնել «կամ սեփական կարիքի բավարարման» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.4-րդ և 1.5-րդ մասեր.

«1.4. Հաշվեկշռման ծառայության մատուցման իրավունք ստացած արտադրության լիցենզիա ունեցող անձին իրավունք է տրվում եւ պարտավորեցվում է էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում մատուցելու հաշվեկշռման ծառայություն հետևյալ գործառույթներով.

1) հաշվեկշռման շուկայում կատարել հաշվեկշռող էլեկտրական էներգիայի առևտուր,

2) շուկայի կանոնների համաձայն գնել էլեկտրական էներգիա (հզորություն) և վաճառել էլեկտրական էներգիա էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի այլ հատվածներում,

3) շուկայի կանոնների համաձայն արտահանել և ներկրել էլեկտրական էներգիա,

4) լիցենզիայի պայմաններով և շուկայի կանոններով նախատեսված այլ գործառույթների իրականացման իրավունք:

1.5. Էլեկտրական էներգիայի հաշվեկշռման ծառայության մատուցման իրավունք ստացած արտադրության լիցենզիա ունեցող անձը ենթարկվում է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի՝ էլեկտրական էներգիայի հաշվեկշռման նպատակով տրված կարգավարական հրահանգներին:»:

Հոդված 5. Օրենքի 39.1-ին հոդվածի 2-րդ մասում «ինչպես նաև էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման ու էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձը» բառերը փոխարինել «էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող անձը, էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձը, ինչպես նաև հաշվեկշռման ծառայության մատուցման իրավունք ստացած արտադրության լիցենզիա ունեցող անձը» կետադրական նշաններով և բառերով:

Հոդված 6. Օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում «կամ բնակելի տարածքների օգտագործման տրամադրում» բառերից հետո լրացնել «, էլեկտրամոբիլների լիցքավորման ծառայության մատուցում» կետադրական նշանը և բառերը:

Հոդված 7. Օրենքի 59-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.1-ին մասով.

«1.1. Հաշվեկշռման ծառայության մատուցման իրավունքը, մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը, էլեկտրաէներգետիկական շուկայում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձին տրվում է որպես բացառիկ իրավունք և պարտականություն՝ սույն մասում նշված ամսաթիվը չգերացանզող ժամկետով:»

Հոդված 8. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
Կ-333-07.07.2022-ՏՀ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Էներգետիկայի մասին» 2001 թվականի մարտի 7-ի ՀՕ-148 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 4-րդ հոդվածի~~ 1-ին մասի~~ 25-րդ կետում «ճանաչված սպառող» բառերից հետո լրացնել «(ենթասպառող)՝ շուկայի կանոններով սահմանված առանձնահատկություններով» բառերը, իսկ 20-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«20) հաշվեկշռող էլեկտրաէներգիա՝ էլեկտրական էներգիայի ուղիղ պայմանագրերի և օր-առաջ շուկաներում վաճառված և գնված էլեկտրական էներգիայի քանակությունների տարբերությունը իրական ժամանակում՝ միևնույն հաշվարկային ժամանակահատվածում փաստացի առաքված և ստացված (ներառյալ՝ ներկրված և արտահանված կամ տարանցիկ փոխադրված) էլեկտրական էներգիայի քանակություններից, որը որոշվում է շուկայի կանոններով սահմանված կարգով:»:

Հոդված 2. Օրենքի 4-րդ ~~հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 20.1)~~ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 20.1-ին կետով.

«20.1) հաշվեկշռման ծառայություն՝ հաշվեկշռող էլեկտրական էներգիայի արտադրության նպատակով շուկայի կանոններով սահմանված կարգով մատուցվող ծառայություն~~:~~.»:

Հոդված 3. Օրենքի 17-րդ ~~հոդվածի 1-ին մասը~~ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ «ի» կետով.

«ի) հաշվեկշռման ծառայության մատուցման ~~բացառիկ~~ իրավունք եւ պարտավորություն ~~վերապահել~~ տալ էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող այն անձին, որն էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի դրական եզրակացության հիման վրա հնարավորություն ունի էլեկտրաէներգետիկական շուկայում մատուցելու հաշվեկշռման ծառայություն:»:

Հոդված 4. Օրենքի 35-րդ հոդվածը~~ը~~ում՝~~.~~

1. 1-ին մասում «այդ» բառից հետո լրացնել «կամ սեփական կարիքի բավարարման» բառերը.

2. ~~Լ~~լրացնել հետևյալ բովանդակությամբ ~~1.4 և 1.5 կետերով~~1.4-րդ և 1.5-րդ մասեր.

«1.4. Հաշվեկշռման ծառայության մատուցման իրավունք ստացած արտադրության լիցենզիա ունեցող անձին ~~բացառիկ~~ իրավունք է տրվում եւ պարտավորեցվում է էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում մատուցելու հաշվեկշռման ծառայություն հետևյալ գործառույթներով.

1) հաշվեկշռման շուկայում կատարել հաշվեկշռող էլեկտրական էներգիայի առևտուր,

2) շուկայի կանոնների համաձայն ~~էլեկտրական էներգիա գնել եւ վաճառել~~ գնել էլեկտրական էներգիա (հզորություն) և վաճառել էլեկտրական էներգիա էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի այլ հատվածներում,

3) շուկայի կանոնների համաձայն արտահանել և ներկրել էլեկտրական էներգիա,

4) լիցենզիայի պայմաններով և շուկայի կանոններով նախատեսված այլ գործառույթների իրականացման իրավունք:

1.5. Էլեկտրական էներգիայի հաշվեկշռման ծառայության մատուցման իրավունք ստացած արտադրության լիցենզիա ունեցող անձը ենթարկվում է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի՝ էլեկտրական էներգիայի հաշվեկշռման նպատակով տրված կարգավարական հրահան ~~գներին:»:~~

Հոդված 5. Օրենքի 39.1-ին հոդվածի 2-րդ մասում «ինչպես նաև էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման ու էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձը» բառերը փոխարինել «էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող անձը, էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձը, ինչպես նաև հաշվեկշռման ծառայության մատուցման իրավունք ստացած արտադրության լիցենզիա ունեցող անձը» կետադրական նշաններով և բառերով:

Հոդված ~~5~~6. Օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասում «կամ բնակելի տարածքների օգտագործման տրամադրում» բառերից հետո լրացնել «, էլեկտրամոբիլների լիցքավորման ծառայության մատուցում» ~~բառերը~~ կետադրական նշանը և բառերը:

Հոդված 7. Օրենքի 59-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 1.1 մասով.

«1.1. Հաշվեկշռման ծառայության մատուցման իրավունքը, մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը, էլեկտրաէներգետիկական շուկայում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձին տրվում է որպես բացառիկ իրավունք և պարտականություն՝ սույն մասում նշված ամսաթիվը չգերազանցող ժամկետով:»

Հոդված 8~~7~~. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-333-07.07.2022-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1	2	3	4	5	6
1.	**ՀՀ կ**առավարություն	1-ին հոդված	1. Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածում «1-ին մասի» բառերը հանել՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 4-րդ մասերի կարգավորումները: 2. Միաժամանակ առաջարկվում է 1-ին հոդվածում «4-րդ հոդվածի» բառերից հետո լրացնել հետևյալը՝ «25-րդ կետում «ճանաչված սպառող» բառերից հետո լրացնել «(ենթասպառող)՝ շուկայի կանոններով սահմանված առանձնահատկություններով» բառերը, իսկ»: Առաջարկը պայմանավորված է նրանով, որ լրացմամբ ենթասպառողներին նույնպես հնարավորություն կտրվի որակավորված սպառող դառնալու հայտ ներկայացնել և այդպիսին ճանաչվելու դեպքում՝ ենթասպառողները էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրաէներգիա գնելու իրավունք կստանան, ինչը «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) գործող կարգավորմամբ սահմանափակված է:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	**ՀՀ կ**առավարություն	2-րդ հոդված	Հանել «հոդվածի 1-ին մասը» բառերը, փոխարենը լրացնել՝ «հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 20.1-ին կետով» բառերով՝ հաշվի առնելով «Նորմատիվ	Ընդունվել է:	Ընդունվել է:

			իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 4-րդ մասերի կարգավորումները, ինչպես նաև հիմք ընդունելով դասական թվականների գրության ձևը:		
3.	**ՀՀ կ**առավարություն	3-րդ հոդված	1. «հոդվածի 1-ին մասը» բառերը փոխարինել «հոդվածը» բառով՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 14-րդ հոդվածի 3-րդ և 17-րդ հոդվածի 4-րդ մասերի կարգավորումները: **2. Առաջարկվում է նաև նախագծի** 3-րդ հոդվածից հանել «բացառիկ» բառը, իսկ «վերապահել» բառը փոխարինել «տալ» բառով: Առաջարկությունը պայմանավորված է նրանով, որ բառերի նման խմբագրման դեպքում նախագծով առաջարկվող հիմնական կարգավորմամբ հնարավորություն կտրվի Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին հաշվեկշռման ծառայության մատուցման իրավունք և պարտականություն տրամադրել էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա ունեցող ցանկացած անձի, ով կբավարարի Նախագծով սահմանված պահանջը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
4.	**ՀՀ կ**առավարություն	**4-րդ հոդված**	Առաջարկվում է՝ Նախագծի 4-րդ հոդվածը խմբագրել՝ բաժանելով երկու կետերի, հետևյալ բովանդակությամբ՝ «**Հոդված 4.** Օրենքի 35-րդ հոդվածում՝ 3) 1-ին մասում «այդ» բառից հետո լրացնել «կամ սեփական կարիքի բավարարման»	Ընդունվել է:	Ընդունվել է:

			բառերը. 4) լրացնել հետևյալ բովանդակությամբ 1.4-րդ և 1.5-րդ մասեր. «1.4. Հաշվեկշռման ծառայության մատուցման իրավունք ստացած արտադրության լիցենզիա ունեցող անձին իրավունք է տրվում եւ պարտավորեցվում է էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում մատուցելու հաշվեկշռման ծառայություն հետևյալ գործառույթներով. 1) հաշվեկշռման շուկայում կատարել հաշվեկշռող էլեկտրական էներգիայի առևտուր, 2) շուկայի կանոնների համաձայն գնել էլեկտրական էներգիա (հզորություն) և վաճառել էլեկտրական էներգիա էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի այլ հատվածներում, 3) շուկայի կանոնների համաձայն արտահանել և ներկրել էլեկտրական էներգիա, 4) լիցենզիայի պայմաններով և շուկայի կանոններով նախատեսված այլ գործառույթների իրականացման իրավունք: 1.5. Էլեկտրական էներգիայի հաշվեկշռման ծառայության մատուցման իրավունք ստացած արտադրության լիցենզիա ունեցող անձը ենթարկվում է էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի՝ էլեկտրական էներգիայի հաշվեկշռման նպատակով տրված		

			կարգավարական հրահանգներին:»: **Նախագծում նման լրացման արդյունքում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձին հնարավորություն կտրվի էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայում էլեկտրական էներգիա գնել սեփական կարիքի բավարարման նպատակով, օրինակ՝ այն դեպքերում, երբ կայանը տեխնիկական վերանորոգման նպատակով ժամանակավորապես չի գործարկվում: Ներկայիս կարգավորմամբ արտադրողը սահմանափակված է նման պարագաներում էլեկտրաէներգիա գնել միայն բաշխման (երաշխավորված մատակարարման) լիցենզիա ունեցող անձից, ինչը չի բխում էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդելի նպատակից:** **Նախագծի 4-րդ հոդվածի 2-րդ կետով առաջարկվող 1.4-րդ մասից հանելով «բացառիկ» բառը՝ համահունչ է դառնում նախագծի 3-րդ հոդվածում կատարված փոփոխությանը:** **Ըստ էության «հզորություն» բառի ավելացումը նույնպես պայմանավորված է էլեկտրաէներգետիկական շուկայի նոր մոդելով:**		
5.	**ՀՀ կ**առավարություն	4-րդ հոդվածից հետո լրացվող նոր 5-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 4-րդ հոդվածից հետո ավելացնել նոր 5-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 5. Օրենքի 39.1-ին հոդվածի 2-րդ մասում «ինչպես նաև էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման ու էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձը» բառերը փոխարինել «էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզիա ունեցող անձը,	Ընդունվել է:	Ընդունվել է:

			էլեկտրական էներգիայի բաշխման լիցենզիա ունեցող անձը, ինչպես նաև հաշվեկշռման ծառայության մատուցման իրա- վունք ստացած արտադրության լիցենզիա ունեցող անձը» կետադրական նշաններով և բառերով:»: **Առաջարկվող լրացման արդյունքում Օրենքում կիստակեցվի էլեկտրաէներգետիկական մեծածախ և մանրածախ շուկայի առևտրի մասնակիցներին համակարգային ծառայություններ մատուցող անձանց շրջանակը:** **Ըստ այդմ հոդվածների համարակալումը փոխվել է:**		
6.	**ՀՀ կ**առավարություն	5-րդ (լրամշակված 6-րդ հոդված)	«բառերը» բառը փոխարինել «կետադրական նշանը և բառերը» բառերով՝ **հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումը:**	Ընդունվել է:	Ընդունվել է:
7.	**ՀՀ կ**առավարություն	5-րդ հոդված (լրամշակված 6-րդ) հոդվածից հետո լրացվող նոր 7-րդ հոդված	Առաջարկվում է նախագծի 6-րդ հոդվածից հետո ավելացնել նոր 7-րդ հոդված հետևյալ բովանդակությամբ՝ «Հոդված 7. Օրենքի 59-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 1.1-ին մասով. «1.1. Հաշվեկշռման ծառայության մատուցման իրավունքը, մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը, էլեկտրաէներգետիկական շուկայում էլեկտրական էներգիայի արտադրության լիցենզիա ունեցող անձին տրվում է որպես բացառիկ իրավունք և պարտականություն՝ սույն մասում նշված ամսաթիվը չգերացանզող ժամկետով:» **Առաջարկությունը պայմանավորված է նրանով, որ 2022թ. փետրվարի 1-ից**	Ընդունվել է:	Ընդունվել է:

			գործարկված էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի նոր մոդելը ենթադրում է, որ էլեկտրաէներգետիկական համակարգում արտադրող կայաններից առնվազն մեկը պետք է շուկայի մնացած մասնակիցներին մատուցի հաշվեկշռման ծառայու- թյուն: Նախագծի հիմնական կարգավորումը իրավական տեսանկյունից թույլ է տալիս հաշվեկշռման ծառայություն մատուցման իրավունք տրամադրել էլեկտրաէերգիայի արտադրության լիցենզիա ունեցող մեկից ավել անձանց: Սակայն հաշվի առնելով այն, որ ներկայում էլեկտրաէներգետիկական շուկայում գործող արտադրողներից փաստացիորեն միայն մեկն ունի նման ծառայության մատուցման համար անհրաժեշտ տեխնիկական կարողություններ, ինչպես նաև էլեկտրաէներգետիկական շուկայի արդյունավետ գործունեու թյունն ապահովելու նպատակով՝ նախագծով առաջարկվում է Օրենքի անցումային դրույթներում նախատեսել հաշվեկշռման ծառայության մատուցման գործառույթի՝ որպես բացառիկ իրավունքի և պարտականության տրամադրումը տվյալ մեկ արտադրողին սահմանափակ ժամանակահատվածով՝ ժամանակ տալով մյուս արտադրողներին այդ ընթացքում ձեռք բերել անհրաժեշտ տեխնիկական կարողությունները շուկայում հաշվեկշռման ծառայություն մատուցելու համար: Ըստ այդմ հոդվածների համարակալումը կփոխվի:		